կոխէ, կ'ըսկսին յուզուիլ, ասոտին անդին դառնալ, վանդակին ձողերը կրծել։ Ամբողջ գիշերը և արևագալի մէկ մասը քալելէ վերջը կանգ կ'առնեն և կը հանգչին։ Բայց այս հանգիստը հոն գտնուած դաշտերուն խաղաղութիւնը չի յարգեր, որովհետև այնպիսի աւերած կը պատճառեն բոյսերու, որ կարծես թէ հրդեհ եղեր է հոն։

Այս անթիւ գաղթական լէգէոնները, որ իրենց անցած տեղերուն ապականութեան առիթ կ'ըլլան՝ և որոնց ընթացքը խափանելու միջոց մը չէ հնարուած՝ միայն անանցանելի երկու արգելքներու կը հանդիպին, մին Հիւսիսային ծովը միւսը Պոթնիոյ ծոցը։ Բայց մինչև որ այս սահմանները հասնին՝ մեծապէս նուազած կ'ըլլան։ Թէպէտև Լեմինկները քաջ լողորդներ են՝ բայց շատերը՝ գետերէն անցնելու միջոց կը խեղդուին. և շատեր ալ բնական թշնամիներու որսեր կ'ըլլան՝ որոնք զիրենք կ'որսան ու կը հալածեն։ Աղուէսները, արջերը, որկորուստները (գղ. glouton. իտ. Ghiottone). կնգումները (hermine), կուզերը (martire. իգ. Martora) գիշերային և տուընջենային յափշտակիչ թռչունները, անդադար կ'որսան զանոնք՝ և ահագին քանակութեամբ կը փճացնեն։ Հիւսիսային եղջերուներն իսկ՝ ինչ որ կը պատմեն ոմանք՝ լեմինկները կը հալածեն, ընտանի կենդանեաց մէջ՝ խոզը, կատուն, նաև շունը իրենց թշնամի են. բայց պէտք է ըսել որ շունը կը սպաննէ զիրենք՝ աւելի զուարճութեան՝ քան թէ ճաշակելու համար. որովհետև անոնց միսը չուտեր՝ կամ միայն գլուխնին կը կլլէ։ Վերջապէս՝ նոյն իսկ ագռաւները, վարազաթև որորը (goëland). կաչաղակները կը յարձակին լեմինկներու վրայ։

Հ. Ն. Տ.

Շարայարելի

ՏԱՃԿԱՀԱՅ ՄԱՄՈՒԼ

Սահմանադրական շրջանի հայ Հանդէսները

Թուրքիոյ Սահմանադրութեան առաջին պտուղն եղաւ նորանոր թերթերու հրապարակ հանուիլը, այդ եղաւ նաև Ազատութեան առաջին տհաս պտուղը քանի որ միջակ գրագէտներ՝ պարզապէս խմբագրապետ անուանուելու համար հրապարակ ելան նորանուն թերթերով և որոնք ասուպի նման շուտով անյայտացան։ Եւ ցաւալին այն եղաւ որ Սահմանադրութեան զոհ եղաւ «Լոյս» պատկերազարդ գրական շաբաթաթերթը, որ երազ մը կը նկատուէր նախկին բռնակալութեան շրջանին կարենալ երևնալուն համար։ Ասոր հետևեցաւ «Մասիս»ը, արդէն ասոնցմէ առաջ դադրած էր Փունջը։ Նոր շաբաթաթերթերուն անդրանիկը «Հայրենիքի Քնար»ը որ սկըսաւ հրատարակուիլ իբր գրական թերթ՝ բաւական անգամ երևնալէ վերջ դադրեցաւ. այսպէս նաև Նէձար–ը–Միլլէթ, «Թուրքօ–Հայ օսկան Օսմանեան հայրենիքին քաղաքական, ընկերական և տնտեսական կենսական շահերուն» շաբաթաթերթը, որ 1908 Սեպտ.ի հրապարակ ելաւ հայ և թուրք լեզուներով։ Տօքթ. Մ. Բ. Խըթիւճեան որ «մօտ կէս դար առաջ արդէն սկսած էր «Կիլիկիա» ամսաթերթը հրապարակ հանել՝ 1909 փետրուար 7ին զայն կրկին երևցուց իբր առողջական, տնտեսական և գրական շաբաթաթերթ։ «Գոհութիւն Աստուծոյ, կ'ըսէ յառաջաբանին մէջ, բժշկական աշակերտութեանս ատեն 1861ին սկսած «Կիլիկիա», մօտ կէս դար, 48 տարի ետք, այսօր 1909ին վերստին հրատարակելու բախտն ու մխիթարութիւնը կ'ունենամ»... բայց շուտով ալ զայն չկարենալ շարունակելու դժբախտութիւնը կ'ունենայ։ (Մէկ թիւ միայն տեսած եմ)։ Գարեգին Կոզիկեան և Հրանտ Արծրունի 1909 մարտին խըմբագրել սկսան Նոր–Հոսանք հասարակական, քաղաքական, տնտեսական և գրա-

digitised by A.R.A.R.@

կան շարաթաթերթը թղթակից ունենալով նոր ու անծանօթ գրիչներ և շուտով գրաքննութեան պատճառներ՝ որ նոր – Հռոմէն ալ դադրի հոսելէ։ (երկու թիւ միայն տեսած եմ)։

1908 Հոկտեմբերին երևցաւ Առաւոտ, որ ուրիշ բան չէր բայց եթէ մեզի ծանօթ Բիւրակի վանականական թերթը նոյն Ս. Զէօմլէքճեանի և Ա. Գալբազճանի խմբագրութամբ. այս եղաւ տարբերութիւնը՝ որ «Առաւոտ»ը Բիւրակի երկար կեանքը չունեցաւ՝ (մէկ թիւ տեսած եմ)։

Եթէ ամէն ակումբ իր «Օրկան»ը ունենար՝ հազարէն աւելի թերթեր պիտի ունենայինք, քանի որ հազարէն աւելի Ակումբներ, Գիւղեր, Լինկերակցութիւններ կազմուեցան ամէն հայաբնակ գիւղերու մէջ։ «Ալարայր» ակումբը կը հրատարակէ 1909 յունուար 15ին Ալարայր Հանդէս կիսամսեայ. որ «հրապարակ կ'ելնէ երիտասարդ պատանիներու ջանքով և կարող գրիչներու օժանդակութեամբ», և կու գայ օգտակար ըլլալ Տղոց, Երիտասարդներուն, Զարհամաներուն և Ծերերուն. ասա ալ շուտով կը դադրի (մէկ թիւ տեսած եմ)։ Արամ Անտոնեան որ միայն իր գրագէտ կը յիշուէր բռնակալութեան օրով՝ 1909 փետ. 14ին Խարազանի առաջին թիւով ցցուց թէ միանգամայն առաջնակարգ երգիծարան մ'է։ Խարազանը թէ՝ «Օրաթերթ պատկերազարդ» էր և թէ «շաբաթաթերթ պատկերազարդ»։ յօդուածները յորոց ոմանք Եր. Օտեանէն կը ստորագրուէին՝ պատկերները՝ որ Ա. Անտոնեանէն կը գրծուէին «Խարազան»ը պահեցին «երգիծական» սահմանին մէջ։ Ապրիլի վերջերը՝ կամ խմբագրին հիւանդութեան կամ ի սուգ Ատանայի կոտորածին՝ դադրեցաւ Խարազան հայ ընթերցողները խնացնելէ։

Երբ պ. Տ. Միւրմէեանը փորձեց թէ դժուարութիւններ կան օրուան խնդիրներով յուզուող հայուն համար գրական շաբաթաթերթ տալ՝ 1909 մարտին փորձեց Սատանը հրատարակել իր «պատկերազարդ ամսաթերթ, գրական, բանասիրական, մանկավարժական և քաղաքական» և կրցաւ ծանօթ գրագէտներ հաւաքել իր շուրջ և Սատանը գրական թերթ մ'ընել։ և կրցաւ երեք թիւերը հրապարակ հանել իրեն յօդուածագիր ունենալով Ա. Եարճանեանը, Եր. Գալանճեանը, Դ. Վարուժանը, Նարօյեան, Ալանեան վարդապետները, Ռ. Որբերեանը, Դուրեան և Մուշեղ եպիսկոպոսները, Թլկատինցին, Ե. Թօփճեանը են և այլն. յուսանք թէ պիտի շարունակուի։

Այս, և ուրիշ բոլոր դադրած թերթերու խմբագիրները իրենց առաջին յօդուածը կը սկսին անիծելով Հին Ռէժիմը որ Մամլոյ ազատութիւնը բռնաբարած էր և այն ատեն չէին կրնար փայլիլ հրապարակի վրայ. ու երբ Նոր Ռէժիմի այս խմբագիրները իրենց թերթերը շուտով կը դադրեցնեն՝ Համիտը արդարացնե՞լ կը փորձեն!

*

Ներկայապէս Պոլիսը անի հետեւեալ շաբաթաթերթերը որոնք յուսով ենք թէ պիտի շարունակուին քանի որ կուսակցական–գրական են։

Զայն Հայրենեաց. — Ամերիկա հրատարակուող այս շաբաթաթերթը 1908 Հոկտեմբերին Պոլսոյ մէջ սկսաւ լոյս տեսնել իբր քաղաքական և գրական բայց է՛ միանգամայն օրկան՝ Վերակազմեալ Հնչակեան, արտոնատէրն է Ե. Զաւուշեան։ Մենք այժմ մեր առջև կ'առնենք Յուլիսի թիւերը – ուր շատ քիչ բան կայ գրականին պատկանող. թիւ 35–36 ունի Ա. Փանոսեանի Երեք Սոփորները քերթուածը զոր Ռուսահայք Պոէմա կ'անուանեն։ Լևոն Լամանեան՝ Այվազովսքիի փոթորկավար ոյժարներուն առջև քերթուածով կրցած է կենդանացնել՝ արդէն կենդանի նկարը։ — թիւ 37. Թրքահայ մամուլը խորագրով շատ արդարացի կերպով կը քննադատէ զայն Ա. Ց. Քէօլէեան (Պօթոն)։ Թրքահայ լրագրութեան ինկածութիւնը կամ հեռուէն կը նկատուի կամ մի քանի տարի վերջ. բայց պարագաներն են. դարն է որ բանաստեղծը կը ծնի. ժամա-

digitised by A.R.A.R.@

նակն է որ գրագէտներ երեւան կը հանէ։ — Թիւ 37–38 Ա. Զօպանեան ունի Հայ-Թուրք եղբայրակցութեան համար լուրջ յօդուածը եւ Լ. Խաճանեան վրէժի ճամբէն կրակոտ քերթուածը։

Ազդակ. — Յուլիս 11ի Սահմանադրութիւնը չտուաւ մեզի լուրջ գրական թերթ մը, եւ բոլոր այն գրագէտները որոնք Արտասահմանէն Պոլիս խռնուած էին պէտքը զգացին կեդրոնական գրական լուրջ Հանդէսի մը՝ որ ժամադրավայրը ըլլար իրական գրագէտներու, որոնք ճաշակաւոր յօդուածներով ձաղկէին տեղական լրագրութիւնը եւ գրականութիւնը։

Կարծէք այդ նպատակով սկսաւ երեւնալ Ազդակը (1908 դեկտ.) խմբագրութեամբ Գ. Բարսեղեանի, Տիկին Զ. Եսայեանի, Վ. Թաթուլի, Շ. Միսաքեանի։ Բայց սակայն կուսակցական (Հ. Յ. Դաշնակցութիւն) գոյնը որ ունէր Ազդակ՝ հեռու պահեց իրմէ այն գրագէտները՝ որոնք օրինակի համար Հ. Յ. Դաշնակցութեան դրօշին տակ չէին ապրեր։ Ազդակը ունի յայտնի գրագէտ համակրողներ որոնք կ՚երեւնայ հոն իրենց լուրջ յօդուածներով։ Ազդակը ունի ընտրուած բանաստեղծներու ախումբ մը որոնց մէջ կը փայլին Դ. Վարուժան, Ռ. Սեւակ. Շահան Նաթալի, Ե. Գոլանճեան, բայց այս բոլոր բանաստեղծներն ալ, նոյն իսկ հեռու ըլլալով Տաճկաստանէն՝ ընդհանրապէս հայ տառապանքը կ՚երգէն ու կ՚ողբան ։ Տիկին Զ. Եսայեան Հուրիյէթ խորագրով գեղեցիկ նորավէպ մ՚ունի (Թիւ 27). — Դանիէլ Վարուժան՝ քերթուած մը, Պատուէր Դերենիկ Ճիզմէճեանին. իր մտերիմն է Ճիզմէճեան որ Եւրոպայէն Հայրենիք (Երզընկա) կը վերադառնայ. Կ՚ըսէ անոր (Թիւ 29)...

Ու նամակն այս զոր կը դնեմ զօտիիդ մէջ աւասիկ
Պանդուխտ օրերս արցունքին չիթովն համրող մօրս յանձնէ։

Յանձնէ մօրս իմ եւ ըսէ՝ որ օրհնէ զայն իր ձեռքով.
Զայն թող օծէ իր աչքին արտօսրներովն աղօթկեր.
Ու գլխուն սեւ քող առնէ, բայց սիրան առնէ թող կարով.
Զի, ընկե՛ր, այդ նամակին մէջ Կարմիր Ցուխտս եմ գրեր։

Շիրակ. — 1909 Փետրվարի սկիզբը Վահան Թէքէեան Պոլիս փոխադրեց Շիրակ Գ. շրջանով՝ իբր «շաբաթական հանդէս՝ գրական եւ քաղաքական»։ Վահան Թէքէեանի եւ Միք. Ս. Կիւրճեանի Շիրակը իբր ամսաթերթ որ 1905ին Աղեքսանդրիոյ մէջ սկսաւ լոյս տեսնել՝ ժամանակի լուրջ գրական թերթերէն մէկն էր. թէեւ տաճկահայ աքսորական գրագէտներն էին անոր յօդուածագիրները՝ բայց այնու նա բոլորովին հակապատկերն էր Պոլսական գրականութեան ։ Վ. Թէքէեան իր շուրջ կրցած է նորէն հաւաքել իր Շիրակի առաջին գրագէտները Միք. Նաթանեանը, Ե. Օտեանը որուն Մասնիկը վէպը իբր թերթօն կը դրուի։ Յ. Գազանճեան, Ա. Ա. Ալպօյաճեան, եւ այլն։

Կոհակ. — Ներկայ տարւոյս մայիսի վերջը հրատարակուիլ սկսաւ Կոհակ շաբաթաթերթը իբր գրական, քաղաքական, տնտեսական եւ ընկերային. որուն խմբագիրներն են Գրիգոր Եղիկեան եւ Հմայեակ Արամեանց ։ Տաճկահայոց համար բոլորովին նոր անուններ են «Կոհակ»ի յօդուածները ստորագրողները եւ աւելի Ռուսահայ գրականութիւնն է որ կ՚երեւայ տաճկահայոց։ Քերթուածիկներ կը ստորագրեն Յ. Գմրեթեան , Գ. Օզանեան , Մ. Բրուտեան։ Կոհակի գլխաւոր յօդուածագիրներն են Գ. Օզանեան, Մուրատեան։ Հոս կ՚երեւայ նաեւ Շ. Կուրղինեան ռուսահայ բանաստեղծուհին՝ որուն Բանուորները՝ (Թիւ 2) ճակատաբաց՝ ցասկոտ եւ սպառնալից խօսքեր կ՚ուղղեն իրենց կեղեքիչ հարուստ մեծերուն։

Ամսօրեայ տեղեկատու. — «Մ. Ռափայէլեան Նախկին աշակերտաց միութիւնը» մայիսին սկսաւ հրատարակել պրակ առ պրակ «Ամսօրեայ տեղեկատուն» որ բաց ի տեղեկատուութենէ ունի եւ գրական յօդուածներ եւ բանախօսութիւններ. Հատէրմով՝ Անձնատպած դիմքերու ներքեւ կը յիշէ Ոգբ. Թ. Թէրզեան գրագէտ–բանաստեղծը եւ Մ. Աղաբէգեան խմբագիր–բանասէրը։

Հ. Մ. ՊՈՏՈՒՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@